

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

50րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 41

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ	ՔՆՆԱՍԷՐ
ՏԱՏԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՇԱՅԻ ՄԱՀԸ	ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ	»
ՊԱՐՍԱՏԻԿ	ԽՈՍՐՈՎԻԿ
ԿԼԱՔԺՇԿԱԿԱՆ	
Անճնասպանություններու առթիւ	ՏՈՔԹ. Թ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
ԱՇՆԱՆ ՆՕԹԵՐ. «Կասիա»	ՄԵՆԱՍԷՐ
ՅՐԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ	
Ժամ Ռիթմիկ	Ե. Գ.
ՅՈՒՇԱՏԵՐ	

Մասիս շաբաթերքի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար ԲԱՌՍՈՒՆ ղրԵ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրԵ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթաստրական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն: Մասիս հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխափառաններուն ու Պանչե-Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն հոյ:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐՍՅԻ

ՀԱՍՏԷ

دوعلیه ده غلطه ده «مسیس» غرضی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորաւանդկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Սերայի Լիսեին դեմ

Ամեն օր ժամը 5—11 (Ը. Թ.)

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 10

Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ՝ կը դարձանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով, ստամոքսի, աղեաց, միզական ճարձաններու հիւանդութիւնները, ջղային սկարոթիւնները, գաղիական այխերը (սիֆիլիս եւլիս) եւ մորթի հիւանդութիւնները :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը :

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ

ԱՊՍՏՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վեասք	240,000,000 Քր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վեասք	99,000,000 Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ :**

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրուողք **ԶԵՐԾ** են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան դրամատունն է **ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ**

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահսապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք Թուրքիո գլխաւոր քաղաքաց մէջ

ՄԱՍԻՆ

50րդ ՏԱՐԻ

— 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901 —

ԹԻԻ 41

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ^(*)

— քաղցր —

Մեր եկեղեցիներուն երաժիշտներու ձայններն ու վէճերը ա՛յնպէս բարձրացած էին քիչ յառաջ, որ անոնց մէջ ինքզինքը լսել տալ անհնար պիտի ըլլար :

Պարապ միջոց մըն է այժմ, երաժիշտները լռած են, եւ կը համարձակինք կարծիք մըն ալ մենք յայտնել :

Պարոն Երաժիշտնէ՛ր, սխալ ենթադրութեան մը վրայ կը վիճիք . Եկեղեցին երաժշտութիւնն չունի, մինչ դուք երաժշտութեան ծագման, փոփոխման, ոճին, ճաշակին խնդիրներով կը յոգնիք եւ կը յոգնեցնէք : Սուրբ Գիրքը, որ իր Հին Ուխտի մասին մէջ աստուածային օրհնութեանց նախատիպը կը պարունակէ, եւ որ Նոր Ուխտի մասին մէջ նորն հիմամբ կը շարունակէ, զիտէ երգ եւ երգէջ, սաղմոս եւ սաղմոս ասել, բայց երաժշտութիւնն բառը չգործածելու երբէք, եւ մեր նախնեաց թարգմանութեան մէջ՝ մէկ անգամ միայն կը հանդիպինք այդ բառին, այն ալ Բարեկոնի անպարկեշտ ընթացքը նկարագրած ատեն (Յայտ. ԺԸ. 22) : Ուրեմն այդ բառը իր մէջ աշխարհական բան մ'ունի, որ կ'արդիւլէ իրեն՝ եկեղեցւոյ դռնէն ներս մտնել :

Երաժշտութիւնը՝ ձայնէ յառաջ եկող հաճութեան արուեստը կամ ճարտարութիւնն է, պարզաբար հաճոյք մը եւ կատարեալ արուեստ մը պարունակող : Հարկաւ միտուը-

նենքս չենք կրնար անցընել որ մեր ձայնով Աստուծոյ հաճոյք պատճառենք . իսկ մեզի համար եկեղեցւոյ մէջ արտաքին հաճոյք մը զգալու հետամուտ լինելն կամ ըսելն իսկ ներեալ չէ՛ :

Հին եւ Նոր Ուխտի եկեղեցիներ կամ ժողովուրդներ միակ ու միակ նպատակ ունեցած են մաղթանքներ, աղօթքներ, օրհնութիւններ բարձրացնել Աստուծոյ, եւ այս նպատակին աւելի ոյժ եւ աւելի ազդուութիւն տալու համար համախումբ կերպով ուղած են կատարել այդ պաշտամունքը : Արդ՝ այսպիսի հոգեւորական համախումբ պաշտամանց մէջ երեք ճեպակ կամ ձեւ ունինք :

Առաջինը՝ մեր արարողութեանց լեզուով կը կոչուի՝ Աղօթք : Եկեղեցւոյ գլխաւոր պաշտօնեայն կ'ելլէ ատեան եւ առանձինն ու պարտ ու պատշաճ կերպով ժողովրդեան խնդրուածքը կը բացատրէ եւ ժողովուրդը կ'ունկնդրէ եւ կը հետեւի եւ ի վերջոյ Ամեն զոհելով՝ պաշտօնէին ըսածները կը հաստատէ, կը կրկնէ, կը ձայնակցի :

Երկրորդը՝ մեր արարողութեանց լեզուով կը կոչուի՝ Քարոզ : Եկեղեցւոյ երկրորդական պաշտօնեայն մէջտեղ կը կանգնի եւ կարեւոր կըլլի խնդրուածքներու կէտերը կը բացատրէ եւ կը յիշեցնէ թէ ի՛նչ եւ ի՛նչ բանի համար աղօթել պէտք է, եւ ժողովուրդը պաշտօնէին հրաւերին հետեւելով իր հառաջանքը կ'արձակէ Տէր ողորմես, Յիշես Տէր, Լուր Տէր կամ անոնց նման համաոտ խօսքերով :

Երրորդը՝ մեր արարողութեանց լեզուով կը կոչուի՝ Երգ : Կարեւոր եւ քովորական եւ

(*) Ծ եւ. — Քննաւորը՝ որ իր ուշագրաւ յօդուածներով ուսումնասիրեց Մխիթարեանները ու Եպիսկոպոսութիւնը Բիւզանդիոնի մէջ, Մասիսն ալ կը զրուագէ Հայ. Եկեղեցւոյ երգեցողութեան նուիրուած եւ նոր տեսութիւններով օժտուած իր այս յօդուածով :

ղող խնդրուածներ , որոշ եւ հաստատուն
բառերով եւ ձեւերով բացատրուած կ'աւան-
դուին ժողովրդեան , որ անոնց ի մանկու-
թենէ կը վարժուի եւ կը սերտէ եւ այդ
հաստատուն աղօթքները համախումբ եւ
միաձայն կը կրկնէ եկեղեցւոյ մէջ : Արդ՝ ու-
րովհետեւ համախումբ եւ միաձայն գրուեց-
ուած ատեն հնար չէ որ ամէն մէկը իր ուղած
կերպով ձայն հանէ , ուստի բնական կերպով
պարտաւորութիւն ծագած է որ ամենքը նոյն
չափով ձայն հանեն , եւ չափն ալ բնական
կերպով յառաջ բերաւ՝ եղանակ մը ունենալ ,
եւ չափով ու եղանակով բան գրուցին է
որ կ'ըսուի երգ : Սաղմունքներ երգերու նա-
խափաղերն են եւ անոնց հետեւողութեամբ
կազմուած են շարականները , որք առ հա-
սարակ երգեցողութեան գանձարանը կը
կազմեն :

Մարդուն բնական է իր ձեռք ինկած ո՛ր
եւ իցէ մի բան՝ շարունակ փոփոխութեանց
ենթարկել , երբեմն յղկել եւ կատարելագոր-
ծել , երբեմն մտչել եւ ուղաւաղել , եւ ստէպ
չտկել կարծելով՝ աւրել : Եկեղեցական եր-
գեցողութիւնն ալ այդ փոփոխութիւններէն
անցաւ . եկեղեցական երգեցողութիւնը ար-
տաքին երաժշտութեան հետ նմանութիւն
ունենալուն , անոր կերպարանները զգեցաւ ,
զեղծումը սովորութիւն եղաւ , նորութիւնը
հաճոյք բերաւ եւ այս կերպով հասանք եր-
գեցողութիւնը երաժշտութեան հետ խառնել ,
եւ աղօթքը հաճոյքի հետ շփոթել :

Եթէ մեր ծիսարանները քննենք , մա'նա-
ւանդ հնագոյն օրինակներու վրայ զննենք ,
պիտի տեսնենք թէ ո՛ւր այժմ՝ երաժշտութեան
գեղեցեղանիք կը լսուի , ծիսարանը պարզապէս
գրած է՝ Ժողովուրդն ասէ , իսկ այդ երկու
կերպերուն մէջ տարբերութիւնը յայտնի է :

Գանք գործնական խնդրոյն , եւ փոխա-
նակ որոնելու թէ արեւելեանը կամ արեւ-
մրտեանը , յունականը կամ եբրայականը ա-
ւելի աղբեցութիւն ունեցած են մեր եկե-
ղեցական երգեցողութեան վրայ , հարցնենք
մեր երաժիշտներուն թէ ի՞նչ սկզբունքներով
կը կարծեն որ եղանակներուն ճշդութիւնը
կրնան ապացուցանել , որպէս զի եթէ երբեք
Յանձնաժողով մը կազմուի՝ կարենայ անոնց-
մէ օգտուիլ :

Հայ. Եկեղեցին հարկաւ երգեցողութեան
նախնական եղանակ մ'ունեցաւ . այդ եղա-
նակը՝ թէ՛ իրեն գիւտը եղած ըլլայ եւ թէ՛
ուրիշի հետեւողութեամբ կազմուած , նախ-
նականը կը մնայ միշտ նախնական :

Հայ. Եկեղեցին՝ այսօր ալ երգեցողու-
թեան եղանակ մ'ունի , կամ՝ լաւ եւս է , շատ
եղանակներ ունի , որոնց համար կ'ըսեն թէ
շատ փոփոխուած է , եւ որ չար եւս է , շա-
րունակ կը փոփոխուի երաժիշտներու ազատ
կամեցողութեամբ կամ սխալ ըմբռնմամբ :
Այս կէտն ալ ամենուն կրկնածն է եւ պէտք
է ընդունիլ :

Արդ , ի՞նչպէս միացնել երկու ծայրերը ,
եթէ հաստատուն եւ որոշիչ եւ ապացուցող
փաստը պակաս :

Վերջին ժամանակներ Պապա-Համբար-
ձումի կազմած հայկական ձայնախիչներով ,
անոր լսած կամ ուղած եղանակները հաս-
տատուն ձեւի մը կըցան վերածուիլ , եւ
այսօր ալ նոյն միջոցով զանազան եղանակ-
ներ կրնան հաստատուն կերպարան առնուլ .
սակայն վերջին ժամանակներու եղանակներն
են որ ձայնախիչներու կ'ենթարկուին , եւ
քանի որ բուն եւ նախնական եղանակի
խնդիրը ի կախ կը մնայ , նորէն պիտի պար-
տաւորինք փնտռել թէ ո՞րն է բուն եղա-
նակը :

Ձայնախիչներէ ազատ դրութեան ներքեւ
եղանակներու փոփոխելուն փաստ են ,
նոյն իսկ այժմեան առանց ձայնագրութեան
երգող դպիրներ , որք միեւնոյն եղանակը
տարբեր տեղեր եւ օրեր երգած ատենին՝
միեւնոյնը չեն եղանակեր : Աւելցուցէք՝ որ
ձայնագրութեան վարպետներն ալ՝ այսօր
իսկ ազատութիւն կըզգան միեւնոյն եղա-
նակը ուղածնուն պէս քաշել քաշկոսել , կամ
ազնիւ բառով՝ գեղեցեղ . ո՛ւր մնաց ուրեմն
եղանակի հաստատուն ձեւը :

Ըստ իս՝ հաստատուն եղանակը այն է
որ միշտ միեւնոյն կերպով կ'երգուի , եր-
գողին քմահաճոյքէն անկախ կը մնայ , եւ
տեղէ տեղ եւ օրէ օր տարբերութիւններ չի
կրեր :

Եթէ այդ հաստատուն ձեւն ընդունուի ,
ամէն ոք գո՛հ պիտի մնայ , ի բաց առեալ

Տիրացու Երաժիշտները, որք այլ եւս ուղած
ատեններն լսողներուն համբերութեամբ պիտի
չզեղծանին, եկամուտ կամ կամաւոր եղա-
նակներ պիտի չկարենան մուծանել, եկեղե-
ցական եղանակները պիտի չկարենան այլայ-
լել. և աղօթքը աղօթք լինելէ չպիտի օտա-
րացնեն: Եթէ այդ հաստատունն ձեռք մտնէ
եկեղեցիներու մէջ, մենք հինին, բունին,
նախնականին խնդիրէն կը հրաժարինք, և
իրենց ճաշակին կը յանձնենք աւելի վայե-
լուշը ընտրել, ձայնագրել, հաստատել,
միայն թէ՛ Աստուծոյ սիրոյն. ուղածնուն
պէս քաշկռտելէ հրաժարին:

Բայց եկո՛ւր նայէ՛ որ մեր Տիրացու Ե-
րաժիշտներ ո՛չ իրարու հետ կրնան համա-
ձայնիլ և ո՛չ ալ քաշկռտելու հաճոյքէն կըր-
նան հրաժարիլ: Քանի Յանձնաժողով ու-
ղես կազմէ՛, իւրաքանչիւրը իր ունեցածը
կամ ուղածը կը բերէ, կը պնդէ, կը պաշտ-
պանէ. և որովհետեւ վերջնական փաստ մը
չկայ, իր ունեցածը կամ ուղածը կը պահէ,
և Յանձնաժողովներէ ետքը կը մնանք հո՞ն
ո՛ւր էինք առաջ:

Այսպէս ալ եղած է մինչեւ հիմայ:

ԲՆՆԱՍԻՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓԱԾԱ ՏԱՏԵԱՆ

Երբ Մասիսի այս թիւը հրապարակ ելլէ,
չորս օրէ ի վեր արդէն իսկ հանգչած պիտի
ըլլայ Տատեան Թարութիւն փաշայի մարմինը
իր վերջին բնակարանին մէջ, Պէշիկթաշի ե-
կեղեցւոյն սրահէն, մեծահանգէս յուզար-
կաւորութենէ մը ետքը: Ու օրաթերթերը
սպառած պիտի ըլլան բոլոր մանրամասնու-
թիւնները այդ ականաւոր անձնաւորութեան
կեանքին, հիւանդութեան պարագաներուն ու
թաղման: Ասիկայ պատճառ մը չէ անշուշտ
որ Մասիս ալ իր ցաւակցութեան ու յոր-
գանքի բաժինը չի նուիրէ մեծանուն հանգու-
ցելոյն յիշատակին, որ վերջացող շաբթուան
ամբողջ տեւողութեան միջոցին զրաւեցուց մեր
հասարակութիւնը վշտալի հետաքրքրութեամբ
մը: Երկուշաբթի առաւօտ, կանուխէն, մահ-
ուան գոյժը տարածուելով մայրաքաղաքի
ամէն կողմը, անխորի կերպով տխուր տպա-
ւորութիւն մը կը թողուր թէ՛ անոնց վրայ
որոնք անձամբ ու մօտէն ճանչցած էին Ն.
Բարձրութիւնը եւ թէ՛ անոնց վրայ որոնք
անուշով միայն կը ճանչնային զինքը: Ու
ամէն շրթունքներու վրայ կուգար ցաւի հա-
մանման արտայայտութիւն մը:

— Արթին փաշան մեռեր է: Մեծ կո-
րուստ մը ունեցանք:

Այս կորուստին մեծութիւնը ու այս մահ-
ուամբ պարտաւ մնացած բացը զգալի է նոյն-
քան անհատական որքան հանրային կեանքի
տեսակէտներով, որոնց երկուքին մէջ ալ
Տատեան գերդաստանին փառաւոր անունը
միշտ բարձր պահել գիտցաւ Թարութիւն փա-
շան, իր բնածին յատկութիւններովն ու տա-
ղանդովը, իր ձեռնհասօրէն ու հաւատարմո-
րէն վարած կարեւոր պաշտօններովը, եւ իր
առաքինութեամբ ու բարեպաշտութեամբը
որոնք աւանդական են արդէն իր տոհմին
մէջ:

Տատեանք բնիկ Ակինցի են, եւ Թարու-
թիւն փաշայի մեծ-հայրը՝ Տատ Առաքէլ
ամիրան որ 1780 ին Ակնէն Կ. Պոլիս եկած ու
15 տարի ետքը արքունի վառօդապետ կտր-
գուած էր, ուսումնասէր անձի մը համարը
թողած է: Իր որդին, Յովհաննէս պէյ Տատ-
եան, նոյնպէս արքունի վառօդապետ, ունե-
ցած է չորս մանչ եւ երեք ուղղիկ զաւակ,
որոնցմէ Թարութիւն-Փարեգին (ապագայ փա-
շան) 1830 ին ծնած է Այ-Սթէֆանոսի մէջ:

Թարութիւն-Փարեգին ուշի՛մ պատանի մըն
էր եւ պահ մը հօրենական տանը մէջ գտա-
ւորակուելէ ետքը՝ 14 տարեկան հասակին

Բարից զրկուեցաւ ուր Սէնդ-Պայպ գոյէժին մէջ աւարտեց իր միջնակարգ ուսումները : Յարութիւն-Գարեգին Տատեան, որ ետքէն դիւանագիրտական ասպարէզին մէջ այնքան աշունհանեց, նախապէս այդ ասպարէզին համար պատրաստուած չէր, եւ աւելի յաջողակ կը հանդիսանար գրականութեան մէջ, միեւնոյն ժամանակ յարում ցուցնելով պատմական, քաղաքական, անտեսագիրտական եւ գանձային ծանօթութիւններու : Զորս տարուան շրջանէ մը ետքը Պոլիս վերադառնալով, ամուսնացաւ Ճէզայրցի Մկրտիչ ամիրայի քեռորդուոյն՝ Օր. Տիրուհի Թաքթագեանի հետ : Յարութիւն փաշա եւ Տիկին Տատեան երեք զաւակ ունեցած են . Իսկուհի որ 13 տարեկան մեռած է, Տիկին Եւգինէ Նազալեան (առաջին Թարգմանուհի Կայսերական Կանանոցին) եւ Տիրան պէյ, անդամ Պաշտօնէից ընտրութեան Յանձնաժողովին :

Պետական ծառայութեան մէջ Յարութիւն փաշայի անդրանիկ պաշտօնը եղած է անդամութիւն Արտաքին գործոց նախարարութեան օտար թղթակցութեանց դիւանին ուր քիչ ժամանակի մէջ գնահատել տուաւ ինքզինքը՝ իր Ֆրանսերէնի հմտութեամբը եւ խմբագրելու կարողութեամբը : Տարի մը չանցած, նոյն դիւանին Տնօրէնի օգնական կ'անուանուէր եւ Սալիսէի աստիճանին կ'արժանանար : 1857ին Ֆրանսերէնի Ա. քարտուղար եղաւ Ուլա՛հ-Պուղտան զրկուած պատուիրակութեան որուն պեան էր Սամֆէթ փաշա : Ի դարձին, անդամ կարգուեցաւ Ոստիկանական պաշտօնատան մէջ կազմուած Մէճրիսը Թահգըզ ժողովին ուր առիթ ունեցաւ նաեւ ցուցնելու իր օրէնսգիրտական կարողութիւնը : Այդ թուականէն մինչեւ 1875, յորում Արտաքին գործոց նախարարութեան խորհրդականի կարեւոր պաշտօնին կոչուեցաւ, Յարութիւն փաշա (այդ շրջանին մէջ Յարութիւն պէյ) վարեց բազմատեսակ պաշտօններ թէ՛ Բ. Դրան եւ Մալիէին մէջ եւ թէ՛ օտար մայրաքաղաքներու Օսմ. Դեսպանատանց ումանց կամ առժամայէս զրկուած Օսմ. պատուիրակութեանց մէջ, միշտ յաջող ու գնահատելի կերպով :

1887 ին Վէզիրութեան աստիճանին բարձրացաւ : Յարութիւն փաշա արժանացաւ սկա-

նակուռ Օսմանիէ ու Մէճրիսի պատուանշաններուն, ոսկի եւ արծաթ Իմթիյազ պատուանշանին, եւ իրեւ բացառիկ շնորհ՝ պահելէ ետք իր հօր շնորհուած Իֆթիխարի պատուանշանը, ստացաւ նաեւ Վեհ. Սուլթանին հաստատած ականակուռ Իֆթիխար պատուանշանը : Ունէր նաեւ բազմաթիւ պատուանշաններ՝ մեծ ու փոքր օտար տէրութիւններէն :

Պետական ծառայութեան մէջ՝ Յարութիւն փաշայի Միւսթէշարութեան շրջանը իր ամենէն երկարատեւ ու արգիւնալից պաշտօնավարութիւնը եղաւ : Խորիճիյէի մէջ խմբագրուած բոլոր դիւանագիրտական թուղթերը իր գրիչէն ելած կամ իր սրագրութենէն անցած են : Նոյնպէս կարեւոր գաշնադրութիւններ : Ծոխ Ֆրանսերէն կը գրէր, եւ շատ սահուն լեզու մը ունէր՝ ինչպէս իր գրուած քին նոյնպէս խօսուած քին մէջ : Յարութիւն փաշա վարպետը եղած է՝ այսօր Արտաքին գործոց պաշտօնատան կամ օտար երկիրներու Օսմ. դեսպանատանց մէջ գտնուող շատ մը պաշտօնատարներու, զորս ընտելացուցած, մարզած է դիւանագիրտական լեզուին ու ոճին բոլոր ներութեանց :

Յարութիւն փաշա չորս տարի առաջ կոչուեցաւ նաեւ Պետական Խորհրդոյ քաղաքային ճիւղին անդամակցութեան, պաշտօն զոր Արտաքին գործոց նախարարութեան խորհրդականի պաշտօնին հետ մէկտեղ պահեց մինչեւ իր մահը, թէեւ տարիներէ ի վեր իր տկարութեան պատճառաւ քիչ անգամ կը յաճախէր իր պաշտօնատեղիները : Բայց կարեւոր գիրերը իր տունը կը խմբագրէր ու պէտք եղած տոեները Կայս. Պալատ կ'երթար իր պաշտօնին պարտաւորութիւնները կատարելու :

Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ մինչեւ վերջ իր բարձր վստահութիւնը պարգեւել Յարութիւն փաշայի : Կիրակի իրիկուն, երբ Տիրան պէյ Տատեան Կայս. Պալատ երթալով իր հօր մահը հաղորդեց, Ն. Կ. Վեհափառութիւնը բարեհաճեցաւ իր ցաւն յայտնել տալ Յարութիւն փաշայի որդւոյն, հրամայելով միանգամայն որ յուղարկուորութիւնը իր բարձրագոյն պատուէրներուն համաձայն

կատարուի եւ ծախքը հոգացուի Կայս. մասնաւոր Արկղէն :

* * *

Սպասելով որ հանգուցեալ փաշան մօտէն ճանչցող ու իր կեանքին գիտակից մէկը մասնաւոր յօդուածի մը մէջ պատկերացնէ անհետացող այդ մեծ անձնութիւնը, կ'անցնինք իր անհատական ու ազգային կեանքին որոնց մասին երկու արտասույթներ տալով իր զգալի արժանիքը :

« Իրրեւ Հայ անհատ, հաւատարիմ էր Հայ. եկեղեցուն, պահած էր ամէն ծիսակատարութեանց հոգածու ընտանեկան հին աւանդութիւնը, պարբերաբար հանդիսաւոր հոգեհանգիստներ կատարել կուտար իր հօր եւ մօր եւ Տատեանց ազգատոհմին ննջեցելո՞հ համար, կը պատուէր կը մեծարէր Հայ եկեղեցականութիւնը, որ միշտ յարգանք կ'ընդունէր իր տան մէջ, ուր միշտ մաքուր կ'իտուէր ազգային լեզուն : Հոգածու էր ընը տանեկան աւանդութիւններու պահպանման խնամ կը տանէր մանաւանդ իր ընակած թաղին՝ Պէշիքթաշի՝ եկեղեցիին եւ դպրոցին : Պարբերաբար օգնած էր Ակնայ ազգային հաստատութիւններուն, իրրեւ օրրան Տատեանց ցեղին, եւ թէպէտ իր կեանքին մեծագոյն մասին մէջ մեկուսի ապրած էր ազգային գործերէն, վերջերս, երբ կոչուի եղաւ իրենի իր բարձրագոյն յարարերութիւններէն եւ իր երկար փորձառութենէն բաժին հանեց անոնց Քաղաքական Ժողովոյ Ատենապետ ըլլալով 1896 Նոյեմբին : Անկէ առաջ ալ, մէկ-երկու անգամ, ազգային Ժողովներու ատենապետութեան մէջ գտնուած էր : Ազգային իր անդրանիկ պաշտօնն եղած էր 1856 ին անդամակցութիւն նորահաստատ Ոսումնական Խորհուրդին : Իր կնոջ փաշը խորին սուգ մը պատճառեց իր տան մէջ, Հանգուցելոյն ներքին կեանքը մթազնեց այս մեծ կորուստը : Իր սրտին մէջ ամայութիւն մը թողուց կարծես : Եւս քան զեւս առանձնացաւ քաջուցաւ, եւ մերթ ի Պէշիկթաշ, մերթ Շիշի, սահմանափակ կեանք մը վարեց, իրեններով առանձնացած : Շատ չանցած, անողոք, ան-

ներող հիւանդութիւնը գամեց զինք անշարժութեան, իր կեանքին վերջին վայելքներէն ալ զրկելով զինք :

« Յարութիւն փաշա կիրթ ճաշակի տէր էր նաեւ խոցական Էգործերու մէջ : Գրական, գիտական եւ տնտեսական նիւթերու վրայ յոյժ հաճելի խօսակցութիւն մ'ունէր : Սուր յիշողութեան տէր, շատ բան կը յիշէր իր կարգացածներէն եւ իր տեսածներէն : Քաջաբերող խօսքեր ունէր Հայ գրագէտներու եւ խմբագիրներու համար : Մասնաւոր համարում մը կը ցուցնէր քաղաքական նիւթերու վրայ լաւ գրողներուն : Նախանձախնդիր էր ազգային լեզուի մաքրութեան : Այս գրասիրութիւնն ալ, ապաքէն, Տատեանց տոհմին գեղեցկագոյն աւանդութիւններէն մէկն էր, որուն հաւատարիմ կը մնար Յարութիւն փաշա -- » : (*)

« — Հանգուցեալ փաշան իր զբաղմանց ծանրութեան պատճառաւ ժամանակ չէր ունեցած ազգային շրջանակի մէջ ստէպ երեւալու, թէպէտ հեռուստ կը հետաքրքրուէր Պատրիարքարանի գործերով եւ յաճախ տեղեկուութիւններ կը ստանար : Ազգային շրջանակի մէջ առաջին անգամ իր անունը յիշատակուած կը գտնենք 1853ին, երբ տակաւին 27 տարեկան էր ու նոր մտած էր Բ. Գուրը պաշտօնի Նոյն տարին Ապրիլ 15ին Գերագոյն եւ Հոգեւոր Ժողովներու (այսինքն Քաղ. եւ Կրօն. Ժողովներու) երկամեայ պաշտօնավարութեան պայմանաժամը լրանալով հրաժարական մատուցած էին Բ. Գուրը : Տասնըհինգ օր յետոյ Կայս. Հրովարտակով յաջորդներու ընտրութեան հրամանագիրը Պատրիարքարան հաղորդուեցաւ, եւ մայիս 14ին վերակազմուեցաւ վարչական մարմինը, որուն կ'անդամակցէին նաեւ Յովհաննէս պէյ Տատեան եւ Պօղոս պէյ Տատեան : Նորընտիր Գերագոյն Ժողովը իր ուշադրութեան առարկայ ըրաւ ազգային դաստիարակութեան խնդիրը, եւ ժամանակին ամէնէն ուսեալ 14 երիտասարդներէն կազմեց Ոսումն. Խորհուրդ մը : Այդ երիտասարդները կը տեսնենք Ազգ. Վարչու-

(*) Բիւզանդիոն, 8 հոկտ. Թ. 1530 :

թեան ատենապետական ակումբին վրայ : Ռուսինեան իր հրատարակած տարեցոյցին մէջ իւրաքանչիւրին կը կցէ նաեւ իրենց յարմար ածականները , հետեւեալ կերպով . —

«Ամասեան Յակոբ» (հոգադարձ), Երամեան Արրահամ» (լեզուագէտ) , Իւթիւճեան Կարապետ» (հանրագիր) , Հովուեան Յարութիւն» (քանասէր) , Մաքսուտեան Սարիմ» (լեզուագէտ) , Պալեան Նիկողոս» (ճարտարագետ) , Պարսկագանեան Խաչատուր» (քանակագէտ) , Ռուսինեան Նահապետ» (բժիշկ) , Վահանեան Յովհաննէս» (տարագէտ) , Սերովբէ Վիչէնեան» (բժիշկ) , Տատեան Աւաքեւ» (ճարտարարուեստ) , Տատեան Յարութիւն (քնագէտ) , Տատեան Սիմոն» (ճարտարարուեստ) , Օտեան Գրիգոր» (գրական) : Ատենապետն էր Տոք. Սէրվիլէն :

«Այս պաշտօնէն յետոյ , ազգային տարեգրութիւններու մէջ չենք պատահիր այլեւս Յարութիւն փաշայի անունին մինչեւ 1874 թուականը , երբ Յուլիս 21ին կ'ընտրուի ատենապետ եւ հանգուցեալ Ս. Փափաղեան ատենադպիր : Յարութիւն փաշա , Ներսէս Պատրիարքի օրով մէկ տարի միայն վարած է այս ատենապետութեան պաշտօնը , շատ լաւ կառավարելով նիստերը եւ անձնագէտ ալ ազդելով ժողովականներուն վրայ : Այդ թուականէն յետոյ , չարունակ 22 տարի Յարութիւն փաշա ազգային շրջանակի մէջ ուղղակի գործօն դեր մը չէ ունեցած մինչեւ որ 1896 Հոկտ.ի վերջերը ընտրուեցաւ Քաղ. Ժողովոյ անդամ եւ յետոյ ատենապետ : Այս վերջին պաշտօնավարութեան յիշատակը այնքան թարմ է մտքերու մէջ , որ հարկ չենք տեսներ խօսելու այդ մասին : Յարութիւն փաշա իր տկարութեան պատճառաւ քիչ անգամ առիթ ունեցաւ անձամբ մասնակցելու Ժողովոյ նիստերուն , թէպէտ հետեւէն տեղեկութիւններ կ'առնէր գործերու վիճակին եւ ուղղութեան վրայ : Փափաքեցաւ նաեւ Յէրիգիւղի եկեղեցւոյ վերաշինութեան գործը գլուխ հանելու , եւ իր բնակարանին մէջ գումարում մըն ալ տեղի ունեցաւ , սակայն վերահաս հիւանդութիւնը արգելք եղաւ այս գործին հետեւելուն : Յարութիւն փաշայի ազգային կեանքը այսչափով կը վերջանայ . ահաւասիկ :

Ինք թէպէտ գործօն մասնակցութիւն մը ունեցած չէ , բայց Ներսէս Ս. Վարժապետեանի յաջորդող Պատրիարքներու աջակից գտնուած է կարեւոր առիթներու մէջ , մասնաւորապէս Յարութիւն Պատրիարքի օրով Պատրիարքարանի գործերու կարգադրութեան համար խորհրդակցութիւններ ունեցած է ժամանակին պաշտօնական անձնաւորութեանց հետ , ընկերակցութեամբ հանգուցեալ Վահան էֆի եւ Նուրեան էֆի — » : (*)

Յարութիւն փաշայի յաւարկաւորութիւնը , չորեքաքթի օրը , վշտակցութեանց ու մեծաբանաց ընդհանուր արտայայտութիւն մը առաջ բերաւ եւ կատարուեցաւ ազգին բոլոր դասակարգերուն մասնակցութեամբ , եկեղեցական եւ աշխարհական , — պետական պաշտօնատարներ , առեւտրական ու սեզանաւորական դաս , բժիշկ , փաստաբան , մամուլի ներկայացուցիչներ , Պատրիարքարանի պաշտօնէութիւն եւ ստուար բազմութիւն ժողովրդեան :

Կայս. Պալատան եւ Բ. Դրան ներկայացուցիչներէն զատ , ներկայ էին նաեւ պետական բազմութիւն անձնաւորութիւններ եւ օտար դեսպանատանց թարգմանները : Նոյնպէս Բողոքականաց Ազգապետը , եւ պատուիրակութիւններ՝ Հայ Հոռմէականաց եւ Յունաց Պատրիարքարաններէն , Պուլկարաց Էքզարքարանին եւ Հրէից Խախումպետարանին կողմէ :

Ս. Պատրիարքը՝ շրջապատուած մայրաքաղաքի ամբողջ եպիսկոպոսներէն՝ նախագահեց յաւարկաւորութեան հանդէսին եւ պերճաւոր դամբանականով մը գծեց հանգուցելոյն կեանքը , եւ սրտի ու մտքի յատկութիւնները :

Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիէն պատկառելի թափորով մը մինչեւ Ս. Յարութիւն եկեղեցին առաջնորդուեցաւ դագաղը եւ անկէ Պէշիկթաշի Ս. Աստուածածին եկեղեցին որուն պարտէզին մէջ ամփոփուեցաւ մարմինը՝ երկաթ վանդակորմով չղջապատուած դամբարանի մը մէջ , մօտ Տատեանց Նահապետական ու հիւրընկալ բնակարանին ուր ող-

(*) Սուրհանդակ, 9 հոկտ. Թ. 807.

րացեալ Յարութիւն փաշան անցուցած էր իր կեանքին մեծագոյն մասը եւ որ առտնին սիրելի յիշատակներով լեցուն էր իրեն համար : Զորեքշարթի օրը Ազգ. Պատրիարքարանը գոց մնաց ի նշան սգոյ եւ շարթուս մէջ Վարչական Ժողովներն ու Խորհուրդները չի գուժարուեցան ի պատիւ յիշատակի Քաղ. Ժողովոյ հանգուցեալ Առնեապետին : Յուզարկաւորութեան օրը փակ մնացին նաեւ այն վարժարանները որոնք մասնաւորապէս վայելած են Տատեան գերդաստանին բարիքները :

Մայրաքաղաքիս ոչ միայն հայ լրագրութիւնը, այլ եւ թուրք մամուլը եւ եւրոպական ու յունական թերթերը ընդարձակ էջեր նուիրեցին Տատեան Յարութիւն փաշայի յիշատակին : Մասիսի Խմբագրութիւնն եւս կը փութայ իր խորին ցաւակցութիւնը յայտնել հանգուցելոյն զաւկներուն՝ Տիրան պէյ Տատեանի եւ Տիկին Եւգինէ Նազախեանի , ու եղբորորդւոյն՝ Տրդատ պէյ Տատեանի :

ՊԱՐՍԱՏԻԿ

Յոբէլեաններ. — Տ. Գիւտ Քհնյ. Աղանեանցի յորելեանն ալ ըրին Թիֆլիզիք : Տ. Գիւտ Քհնյ. լու հաւաքիչը եւ հրատարակիչը եղաւ մեր եկեղեցական աշն գրաւոր յիշատակարաններուն , որոնք ժամանակակից կը համարուին եւ իրենց կարեւորութիւնը ունին : Տ. Գիւտ Քհնյ. իր ժողովրդական հրատարակութիւններով եւ մասնաւորապէս իր Լուսնայ պարբերականով ցոյց տուաւ թէ կարող է հրատարակագրական գործ վարել իր շուրջը հաւաքելով գրական լուսագոյն ոյժերը :

Տ. Գիւտ Քհնյ.ի գործունէութիւնը խթան մը չէ՞ իր կարգակիցներուն , հասկցնելու համար թէ կարող քահանաներ ուր որ ալ գրտնուին՝ գիտեն իրենց տատիճանին, իրենց կարգին բարձրութիւնը ճանչնալ ու ճանչցնել, յարգել ու յարգել տալ :

Այս պարագան աւելի անոնք նկատի առնելու են , որոնք մեր պատուական քահանայութեան անկումը ուրիշ տեղ կը փնտեն :

Տ. Գիւտ Քհնյ.ի յորելեանը՝ քաջակերուելիք յորելեաններէն է : Թուրքիոյ Հայերն ալ, տնչուշտ , բաղբը պիտի ունենան իրենց քահանաներուն յորելեանները հաշակելու :

Թաղակաճութիւնը. — Մայրաքաղաքիս մէջ եկեղեցիներուն ամենէն շատ զրազումը Թաղ. Խորհուրդներու ընտրութիւնը եւ այս Խորհուրդներու հետ կապ ունեցող խնդիրներ են : Շատեր հոգի կուտան Թաղական ընտրուելու համար եւ ոգի ի բռնին կ'աշխատին զա-

նազան միջոցներով : Այսպիսիներ այնքան աչքի կը զարնեն որ , աւելի արժանաւորներ , աւելի յարմարագոյններ ինքնին ետ կը քաշուին : Ու մանք անձնական խնդիրներ, հաշիւներ մաքրելու համար բով մը կը կարծեն Թաղականութիւնը : Բայց թէ եկեղեցին ինչպէս կը մատակարարուի, դպրոցները ինչ վիճակ կ'ունենան, այս բոլորն ալ մէկդի կը դրուին Այսպիսի Թաղականներ իրենց գոյութիւնը հաստատելու համար հանդիսաւոր օրերու մէջ պնակներու թափորին զլուսր կ'անցնին , առանց զլուսնին բանալու , ճախալով մը տաճարէն ներս կը մտնեն , դուրս կ'ելլեն , կօշիկով պահարանէն խորանին ետեւը կ'ելլեն , լուսարարին հրաման մը կուտան , բանկալին առջեւ ժամկոչը կը քշին , եւ այս կարգի շահատակութիւններ :

Ինչ օգուտ կը տեսնեն եկեղեցին ու դըպրոցը այսպիսի Թաղականութենէ : Ճաւալի է որ տեղ տեղ կարգաւորներն ալ կը մասնակցին անօգուտ Թաղականութիւն ընտրել տալու գործին :

Ամենէն թարմը հիմայ Իսկիւտարի Ս. Կարապետ Եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդի ընտրութեան եղանակն է : Զանազան միջոցներու գիտում է քուէները միացնելու համար մարդոց վրայ , որոնք եթէ հաստատուին՝ իրենց առաջին գործը պիտի ըլլայ Քարոզիչը հետաքրքրել : Խուճը մըն ալ կայ որ Քարոզիչը կ'ամբաստանէ այս ընտրութեան համար : Ընդհակառակը իրողութիւնը սա է որ Քարոզիչ վարդապետը համակիր չէ՝ քուէներով փքացած այդ ընտրեալներուն , որովհետեւ

քուէներուն մեծագոյն մասը նոյն ձեւով եւ նոյն գրչով պատրաստուած են եւ Հ. Սուրբը ցաւօք դիտած է եղածները : Ի՞նչ պիտի ընեն այս մարդիկ թաղական ըլլալով . մեզք չէ՞ կորսուած ժամանակին , մեզք չէ՞ դպրոցին , եկեղեցւոյն . ի՞նչ օգուտ այսպիսի թաղականութիւններէն :

ՔՆՃԱՍԷՐ իր «Եպիսկոպոս եւ Եպիսկոպոսութիւն» խորագրով յօդուածներուն մէջ ընտիր դաս մը տուաւ բարձրատիճան եկեղեցականութեան ա'յն մասին , որ միշտ խառնաւորած է Պոլսէն դուրս պաշտօն վարելէ :

Եպիսկոպոսութեան նշանակութիւնը «Քրիստոսէր»ի համար ա'յնքան դրական է , այսօրինքն՝ ա'յնքան կապուած է վիճակի մը կամ վանքի մը առաջնորդական պաշտօնին հետ որ , առանց այսպիսի պաշտօնի եպիսկոպոսացոյնքը անշուշտ պիտի դժկամակին «Քրիստոսէր»ի շնորհով սկզբունքներուն հանդէս :

Տ. Վառճապուռի ՔՆՃ. զգայուն եւ շատ անկեղծ գրուած մ'ուղղած է Ջուղայեցի Տ. Թորոս Քհնյ.ին , այրիացած քահանաներու եւ կուսակրօններու ամուրի կեանքին նկատմամբ : Արտայայտիչ ակնարկութիւններ կան այդ գրուածին մէջ եւ շատ ստոյգ են իր թուած արկածալից կեանքերուն նկարագրականները :

Բայց թէ եկեղեցականութեան ձախող կողմերուն ա'յսքան շնորհիւր նորութիւններ են , սխալ է այս կերպով ենթադրութիւն մ'ընել : Կարդացէ՛ք ամէնէն աւելի ճշմաստներուն կեանքը հին Ճառքատիրներուն կամ Յայտմաւորքներու մէջ . ի՞նչ փորձանքներ (ըլլայ բուն ենթակայէն յառաջ եկած փորձանք , ըլլայ հակառակորդներէն լարուած փորձանք) պարբնած են եկեղեցականներուն ամուրի կեանքին շուրջը :

Այս փորձանքները , սակայն , ոչ-ամուրիներու կեանքէն ալ անջատ չեն : Ա'յն առտնին այլազան երեւոյթները , որոնք ժողովրդեան ամուսնացեալ խաւերուն վրայ կրտիրեն , եւ Առաջնորդարաններու մէջ կուգան իրենց լուծումը կամ կարգադրութիւնը զրտնելու համար , խղճալի իրողութիւններ կ'ապացուցանեն : Խնդիրը միմիայն եկեղեցականութեան — ամուրի կամ՝ այրիացած — վրայ կեդրոնացնել՝ միակողմանի է բոլորովին :

Մեր ժողովուրդի կեանքին վրայ ծաւալող այս երեւոյթը՝ ընդհանուր պատճառներ ունի , այսինքն՝ ամուսնութիւններու նուազումը , մասնաւորապէս աւելի զարգացած միջավայրերու մէջ , ուսից ընդհանրապէս ծայր կուտան արդէն դժգոհութիւններ , եւ կեղծ-ամուրիութեան ընծայումը դիւրութիւնները , տոհմային առտնին առանդութիւններուն իբր նախապաշարում մէկդի դրուելը , դաստիարակութեան թուլութիւնը , եւն. :

Բնական է որ այս պայմաններու տակ , երբ եղածներն ու չեղածներն ալ հրապարակելու դիւրութիւններ կան , աւելի նշատկ իրլլայ , եկեղեցական տարրը :

Ժամանակը մեծ դեր պիտի ունենայ պախարակուած թերութիւններն ու զեղծումները ուղղելու մէջ . բայց մարդիկ ալ աշխատելու են որ օգտուն ժամանակէն եւ օգնեն ժամանակին :

Եւ յատկապէս եկեղեցականութեան վրայ խօսելով , բարձրացնելու եւ քաջալերելու է քահանայութիւնը կարելի եղած բոլոր միջոցներով . եւ որովհետեւ ամուսնական կեանքը սկիզբէն մինչեւ վերջը կշիռ մ'ունի քահանայութեան մէջ , երիտասարդ այրիացած երէցներն ու երիցուհիները դժբաղդ րնելու չէ՛ :

Կուսակրօնները միշտ զբաղեալ պաշտօնի գլուխը կամ վանքերու մէջ՝ իրենց գրասեղաններուն առջեւ տեսնելու է : Որովհետեւ մասնաւորական զբաղումը մեծապէս կը հարթէ կուսակրօն կեանքի դժուարութիւնները :

Գիրքով , գրչով , գարծով լաւ զբաղած միտքը , կտրծքը , ուրիշ զբաղումներէն շատ համ' չառնել :

Քանի որ եկեղեցականութիւնը ա'յնքան կը խժըժուի , նոյն իսկ կեղծ-ամուրի աշխարհականութենէ , նախ խժըժանքը յառաջ բերող պատճառները ուսումնասիրուելու են :

ԽՈՍՐՈՎԻՆ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մասնաւորապէս կը խնդրենք Մարգուտնի եւ Խարբրդի մեր բաժանորդներէն որ հաճին կարգադրել Մախսի բաժանորդագրութեանց հաշիւը մեր գործակալներուն հետ : Նոյնպէս ստիպողաբար կը խնդրենք այն բոլոր գաւառային բաժանորդներէն լորտնք տակաւին չեն հատուցած իրենց բաժանորդագիրը , որ հաճին վճարել :

ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

ԼԱԻԱԳՈՅՆ ՆՈՐԱՎԷՊԸ ԳՐՈՂԻՆ

ԱՐԺԵՔԱՌՈՐ ՊԱՐԳԵՒ ՄԸ

ՄԱՍԻՍԻ խմբագրութիւնը՝ իր հետզհետէ գտած ջերմ ընդունելութենէն փաշարեալած եւ գրասէր ընթերցողներու համախառնքին նորութիւններով համապատասխանելու համար՝ ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ մը կը հաստատէ, սկսելով *Նորավայրի ճիւղին*, որուն պիտի յաջորդեն *Ռեանաւորի*, *Ղնատնեկան ճիւղերու*, *հեքեաթի*, *մանկական բաժինի* եւ *բանասիրութեան վերաբերեալ մրցումներ*, ամենն ալ ՊԱՐԳԵՒԱՌՈՐ :

Այս առաջին անգամուան համար կ'առաջարկենք *Նորավայր մը գրէր որ եւ է ճիւղի վրայ*, նախամեծարութիւն տալով, ի հարկէ, մեր կեանքէն ու մեր բարեբեկն առնուած ճիւղերու :

Ձեռագրին ծաւալը առաւուռեղն վեց էջէն աւելի պէտք չէ ըլլայ (իւրաքանչիւրը *Մասիսի* էջին չափ) մէկ կողմի վրայ գրուած :

Մրցումի ենթարկուելիք ո՛չ մէկ նորավայր պէտք չէ կրէ *հեղինակին* *ստորագրութիւնը*, կասկած չարքնցնելու համար քէ անձը կամ անունին հմայքը ազդած են ֆենիչներուն դասողութեանը վրայ: Կը բաւէ ծածկանուն մը դնել ձեռագրին ներքեւ, եւ այդ միեւնոյն ծածկանունը նշանակել՝ գոցուած պզտիկ պահարանի մը վրայ որուն մէջ ներփակուած ըլլայ վիպագրին անունը, մականունը եւ հասցեն: Այս պզտիկ գոց պահարանը պէտք է կցուի ձեռագրին, ամենքը միակ պահարանի մը մէջ ամփոփուած: Այնպէս որ, երբ կարգը գայ նանչնալու՝ մրցանակի արժանի դասուած նորավայրին ներդիմակը, ձեռագրին ներքեւ գտնուած ծածկանունը կրող պահարանը բացուելով՝ գիտցուի եւ հրապարակուի:

Ձեռագիրները պէտք է ղրկուին *Մասիսի* խմբագրութեան հասցէին, աւելցուելով միայն «Գրական մրցումին նամար» բառերը: *Նոյեմբեր 1/14էն առաջ եւ դեկտեմբեր 1/14էն ետքը* որ եւ է ձեռագիր չընդունուիր այս նպատակով: Մրցման արդիւնքը պիտի ծանուցուի դեկտեմբերի վերջին եօթնեկի *Մասիսի* մէջ ուր պիտի հրատարակուի նաեւ մրցանակ տա՛նող նորավայրը:

Երկու տեղի գրողներ կրնան մասնակցիլ այս մրցումին:

ՄԱՍԻՍԻ խմբագրութեան հրաւերով՝ երեք ծանօթ գրագէտներ ազնուաբար յանձն առած են ձեռագիրներու գնահատման եւ անոնց մէջէն լաւագոյնը նշանակելու հոգը: Մրցման ենթարկուելիք ձեռագիրները խմբագրութեան կողմէ առանց բացուելու պիտի յանձնուին ֆենիչներուն:

Այս գրական մրցման մէջ առաջին հանդիսացող նորավիպագրին *արժեքաւոր ու ճաշակաւոր առարկայ մը* պիտի նուիրուի իբր մրցանակ:

Երեք ֆենիչներուն անունները ինչպէս նաեւ իբր մրցանակ տուելիք առարկային ինչ ըլլալը պիտի ծանուցանենք յաջորդաբար, մինչեւ նոյեմբերի սկիզբը: Ըսենք միայն, առ այժմ, քէ ֆենիչներուն գնահատումը պիտի հիմնուի ո՛չ միայն նորավայրին նիւթին ու հիւսուածքին շահեկանութեանը՝ այլեւ գրուածքին ու ոճին գեղեցկութեանը վրայ, գրական տեսակէտով:

ԿԵՍ — ԲԺՇԿԱԿԱՆ

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՆՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ

Վերջերս մեր օրաթերթերն առիթ ունեցան արձանագրել անձնասպանութեան դէպքեր՝ անսովոր առատութեամբ : Կ'երեւայ թէ ուրիշ տեղեր ալ նոյն մոլութիւնը մեծ համեմատութիւններ ստացած է՝ որ Եւրոպայի բոլոր ժողովական կարեւոր շարքերի մը հարկ սեպեր է այդ նիւթին նուիրել առանձին խումբագրական մը , որմէ նմանապէս կը թեւադրուի յօդուածս :

Հին ժամանակներէ սկսելով՝ հոգեբանական հետաքրքրական խնդիրներ յուզուած են միշտ անձնասպանութեան շուրջը : Յայտնի է թէ յախուռն վճիռ մը կամ անխմտ դատաստան մը երբեք չի կրնար խնդրին հոգեբանօրէն չահեկան կողմին վրայ ըստ սիրելի նպատակէս շատ հեռու է հարկաւ անձնասպանութիւնը արդարացիել կամ դատապարտել : Վերջինը մանաւանդ աւելի «կէս-կրօնական» յօդուածի մը նիւթ կրնայ ըլլալ քան «կէս-բժշկական» մը , որուն տակ սակայն կրնայ ծեծուիլ սա խնդիրը թէ անձնասպանը իր գործը գլուխ հանած պահուն մատուցական առողջ վիճակ մը ունի՞ թէ ոչ : Կամ աւելի կարճ ու պարզ ձեւի մը տակ , հարցումը սա է . — անձնասպան մը ջղային գրգռման ենթակայ հիւանդ անձ մըն թէ չէ : Ու պիտի զարմանաք թերեւս որ այս հարցումը ինքնին այնքան պարզ , իրարու բոլորովին հակառակ պատասխաններ ստացած է գիտուններէ :

Անգլիական դատարանները շատոնց ի վեր ընդունուած բանաձեւ մը ունին անձնասպանութեան դատերու մասին : Երբ որ իրենց կը ներկայանայ անձնասպանութեան պարագայ մը անխտիր կը վճռեն թէ մարդը իր կեանքին վերջ տուեր է «առժամանակեայ ջղային հիւանդութեան մը միջոցին» : Տարակոյս չի կայ սակայն թէ այդ վճիռը արտասանողներն իրենք ալ կը զգան թէ այն ծալուած բանաձեւը ըսկ միջոց մըն է մանուած ապառ խնդրէ

մը դիւրին դուրս ելլելու : Աւելին կարելի չէ ընդունիլ . քանզի արամարանական ըլլալու համար Ֆիզիքական կամ գէթ յարաբերական ազացոյցներ երեւան հանուելու են անձնասպանին մոտաւորական անհատասարակը ին վիճակը հաստատուելու : Ու քանի որ այդ մասը անկարելի է , անոնք ընդունեն իրենց ճշմարտութիւն թէ՛ անձնասպանութիւնը հիւանդութիւն է . եւ այդ իրենց դատաստանական կշիռքին մէկ կողմը երբ անձնասպան մը գրուի՝ անդիլի կողմն ալ յայտնի է թէ ինչ պիտի գրուի :

Միւս կողմէն՝ գտնուած են անձնասպաններ , որոնք իրենց կեանքին վերջ տալու պահերուն՝ գրաւոր կամ բերանացի անանկ յայտարարութիւններ ըրած են , որ իրենց մտային վիճակի առողջութիւնը բնաւ չի կրնար խնդրի տակ մնալ : Ու այդ մարդերէն — անձնասպաններէն — մանք կարծես ազատուած համար իրենց դիակին վրայ արտասանուելիք այդ վճիռէն՝ յայտնապէս պնդած են իրենց վերջին շունչովը թէ մտքի առողջ վիճակի մէջ կը կատարեն անձնասպանութիւն :

Արձանագրուած անձնասպանութիւններուն մէջէն աչքիս զարկաւ կեանքէն զգուած մարդու մը անձնասպանութիւնը այնպիսի եղանակով մը որ տակաւ տակաւ հասնի մահը : Բայց որպէսզի ետքը իր դիակը գննողներն իր մասին եւս մտային խանգարման այն միեւնոյն բանաձեւը չի գործածեն՝ քանի մը րոպէն անգամ մը քովիլը գրուած թուղթի մը վրայ կ'արձանագրէ եղբւր իր օրհասականի տպաւորութիւնը , իր զգացումները , միշտ Զանալով ծանուցանել թէ այդ տողերը գրած ու այդ ցուերը կրած պահուն խելքը գլուխն էր : Եւ երբ իր անշնչացած մարմինը գննող մարդիկ կը պատրաստուէին իրենց բանաձեւը արտասանել ու խղճի հանդարտութեամբ մեկնել կը վարանին ու կը սոսկան , քանզի դիակին քովը ինկած թուղթը կը վկայէր , կը պնդէր թէ առժամանակեայ հիւանդութեան միջոցին չէր գործուած այդ անձնասպանութիւնը :

Անձնասպանութեան դէպք մըն ալ իմ դիտողութեանս տակ եկաւ անցածները : Տարիքը առած , խելացի խելօք մարդ մը՝ երկ-

որդ տառնութեան մը բերած մասնագահան դժուարութիւններէն չիթթած ու սրտնեղած՝ կը փորձէ վերջ տալ իր կեանքին : Կառավարական պաշտօնեաներ , քահանայ , դեղագործ , բժիշկ ու թաղին երեսելիներ հոն էինք , ամենքս ալ մեր մասնաւոր պաշտօնը կատարելու համար : Ու մեր ֆեալիչ անձնապանը (որ դեռ մեռած չէր) կատարեալ պաղարիւնով ու առանց ջղային հիւանդութեան ամենափոքր նշոյլի մը՝ իր գիտցած կերպովը կը պատճառարանէր թէ խելքը կատարելապէս վրան ըլլալով ու իր բացարձակ որոշումովը կը դիմէր այդ միջոցին , վերոյիշեալ դժուարութիւնները վերջնապէս կարգադրելու համար : Ներկաներէն գտնուեցան այնպիսիներ , որոնք անգլիացի դատաւորներուն պէս «հիւանդ մարդ» բռն անցան , բայց անդին ուրիշներ ալ կային , որոնք չի կրցին ձայնակցիլ անոնց : Քահանան կը ջանար մեղայի բերել մարդուկը , մինչ սա կը պատասխանէր թէ պարապ բան էր իրեն համար ազատիլ մահէն , քանի որ չպիտի կարենար ազատիլ իր ներքին կեանքի դժուարութիւններէն : Ու խեղճ մարդուկը մինչեւ վերջին շունչը խելքը գլուխը այդ կերպ պատճառարանութիւններով շարունակեր է խօսքը : Յաջորդ աւտուն , իր իսկ բերնէն այդ խօսքը լսողներէն մէկը չի համարձակեցաւ մտային խանգարման արդիւնք սեպել այդ արարքը :

Կը հասկնամ թէ դժուար չէ ընդունիլ թէ մարդ կրնայ բազմակի թելադրութեան , վայրկեանական յուսահատութեան տակ զիմել ինքնապանութեան յանդուգն միջոցի մը : Ասիկա կարելի բան մըն է վայրկեանապէս . բայց խնդիրը կը կնճռոտի երբ շարունակական կամ տեւական ձեւ մը կը ստանայ այդ դործողութիւնը , ինչպէս վերը պատմուած օրինակներուն մէջ , եթէ գործողութիւն մը լս'կ վայրկեանական դրդումի արդիւնք է , անոր ձգձգումը պէտք է որ փոխէ ուղղութիւնը ու նոյն իսկ ենթակային դատողութիւնը : Ու եթէ տարբեր օրինակներու մէջ անձերնին ինքնայոժար զրկողները մեծ հոգիներ կը նկատուին , խնդիր է թէ լս'կ այդ հայեցակէտէն կարելի' է տարբեր դատաստան մը ընել միւսներուն մասին :

Առանկ խնդիրներով հետաքրքրուողները վախճալու չեն կարծիք յայտնելէ : Թո՛ղ չի կարծուի երբեք թէ անձնապանութիւնը եթէ օրինակի համար փառարանուի՝ պիտի չտանայ անձնապաններու թիւը : Անձնապանութեան համար եթէ հիւանդութենէ տարբեր շարժառիթ մը արուի , այդ ալ ապահով եղիք մարդ չպիտի հրապուրէ , միայն թէ խնդիրը պիտի ստանայ իր արդար լուծումը :

ՏՈՒԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ա Շ Ն Ա Ն Ն Օ Թ Ե Ր

« Կ Ա Ս Ի Ա »

Պատիկ բարեփոխումով մը՝ կապիւս անունը պիտի տամ աշնան այն սիրուն ծաղիկին , — cassie (*) — զոր կապիւս կամ կալթիւս խժաւուր բառերով կը նշանակեն մեր բառգիրքները , խորթ անուն ունեցող աղուոր աղջկան մը պէս որ երբ մեծնայ ու ընկերութեան մէջ մտնէ , արտաութեամբ կը տեսնէ թէ որքա՛ն անհեռատես ու անփափկանկատ գտնուած է իր կնքահայրը : Սա տարբերութեամբ որ , կապիւս չի մեծնար ու աղուոր ալ չէ . վարդին ու գամելիտին մէջտեղ , գարնան ու ձմրան երկու խորհրդանշանները , որոնք դաշտային զբօսանքներու եւ աշխարհիկ երեկոյթներու մէջ կը փայլին կուրծքերու վրայ , հաւասար չքեղութեամբ . որոնցմէ մէկը՝ պարտէզի մը գաղտ հովանիներուն տակ սպասուտանաճ սիրատարի ամուլի մը ներշնչող կ'ըլլայ ու միւսը՝ ջերմանոցի մը գաղջ մթնոլորտին մէջ փոխանակուած սիրային ուխտի մը լուռ վկան , — կապիւս իր եղանակին կը ըստէ , երբ վարդերը խամրած են շատոնց ու գամելիտները չեն բացուած տափաւին , իր դեղնուրակ , խոնարհ գլխիկը ցոյց տալու համար անցորդին , որ հազիւ կը յօժարի ակնարկ մը ուղղել այդ անհրապոյր ծաղիկին : Եւ սակայն ա՛ն ալ զինքը սիրողները ունի , իր մըշկարայր ու թեթեւօրէն զգլխիչ հոտովը որ

(*) Ամպեր-չիչէյի .

մոռցնել կուտայ բնութեան պարգեւներէն զորի բլլալը :

Ու մինչ մանիշակը , մեխակը , ծաղիկեմա-
ճառներու տփրկներուն մէջ նոյն իսկ օրերով
պահուած ու թուամած , ջուրի սրսկումով մը
խարուսիկ կենդանութիւն մը ասնելէ ետքը՝
հազարումէկ գրաւիչ ձեւերով ի տես կը դըր-
ուին արդուզարդի մեծ վաճառատանց դուռ-
ները , Բերա , կիներուն նախասիրական մայ-
թերուն եղբրքը , խեղճ կաւիւն՝ իր բոլոր
թարմութեամբ՝ արշաւայտն առաջ քաղուած
կղզիներու կողերէն , հագլու անկիւն մը կը
գտնէ ցուցադրուելու Ղալաթիոյ ժխորին մէջ ,
այդ գործի ետեւէն կեդրոնը ուր չուարած
ու déplacé կը գտնէ ինքզինքը :

Աղքատիկ աղջիկն է անիկա , իր ցուցա-
դրման ձեւովն ալ , անպարզ ու անփայլ , ու-
րուն քիչեր ուշագրութիւն կը դարձնեն , մինչ
միւսները՝ մեխակն ու մանիշակը՝ աշխարհիկ
կիւնն են , տարփուանքներով շրջապատուած ,
փայլալուծ , նոյն իսկ եթէ խամբելու մօտ
ըլլան : Ուրիշ բոլոր ծաղիկներուն զնորդները
փայլուն երիտասարդներ են սովորաբար ,
որոնք եթէ լամբակնուն չանցունեն զանոնք ,
գէթ ձեռնոցի մը ու արծաթապատ գաւա-
զանի մը մէջանդ կը բռնեն , մինչ կաւիւնն
ընդհանրապէս տարէցներուն կը վիճակի , գըլ-
խիկոր անցնող մարդերու որոնք կը գրաւանեն
զայն շուտափայթ կամ ծրարի մը մէջ կը տե-
ղատուեն , իրր թէ ամօթ սեպէին իրենց՝ այդ
ծաղիկէն քնելին :

* * *

Բարեկամ մը ունէի որ կը խորչէր ծաղիկ-
ներէն . վարդին բոյրը չէր հրապարէր զինքը
ու գամէլիտին տեսքը իր հիացումը չէր հրա-
ւիրեր . ինքը բանաստեղծի հակումներ ունէր
սակայն , գէթ զգայուն սիրտ մը : — «Ինչո՞ւ
այս անտարբերութիւնը , կը հարցնէի իրեն
բնութեան է՛ն փափուկ մէկ արտադրութեանը
հանդէպ որ վայելք մըն է ամբողջ աշխարհի
համար : » — «Որովհետեւ , կը պատասխանէր ,
այս ծաղիկներուն ամէն մէկը կեանքիս մէկ
գառնութեան , մէկ յուսախարութեան յիշա-
տակը կը բերէ ինծի . անոնց բոյրին պէս վա-
ղանցիկ սէրեր , ու անոնց տեսքին պէս ա-
ռաջին խորշակէն թարչամելու սահմանուած

գեղեցկութիւններ տրտմեցուցին հոգիս . կիներ-
րուն ու տղաքներուն կ'ընայ սիրել ծաղիկ-
ները , մէկ օրէն միւսը անփայթ կերպով գե-
տին նետելու համար զանոնք՝ երբ կ'որոնցնեն
իրենց գեղն ու բոյրը : »

Այդ միեւնոյն բարեկամս , տարիներ
վերջ , իրիկուն մը , Հէյպէլի եղբւրներու
պուրակին մէջ՝ կ'ըսէր ինծի , ձեռքը բռնած
թարմ կաւիւններու փնջիկ մը . — «Ահա՛ իմ
խաչալիս հաւապատասխանող ծաղիկը , ան-
տեսուած , գրեթէ արհամարհուած , որ սա-
կայն խաղկանք չի պատճառեր , որովհետեւ
զգլխիչ տեսք մը չունի արդէն . ինչ որ էր
այս առտու , երբ նոր քաղեցի զայն սա ծո-
վեղերեայ բլրակին գագաթէն , գրեթէ նոյնն
է ամիսներ վերջ , երբ ձմեռ գլշեր մը վէպի
մը էջերուն մէջէն գտնեմ զայն վերստին ,
քիչ մը ճնշուած՝ իրաւ , ու ամբած , — ինչ-
պէս իր ճակատագիրն է արդէն , — բայց նոյն
գոյնովը ու նոյն բոյրովը գրեթէ : Գարունին
առուգութիւնը չունեցաւ , որ այդ կենսաբող-
բով եղանակին անհետանալուն խամբի .
աշնան մէջ ծնաւ արդէն , ձմրան այնքան
մօտ , որ ձիւնը չազդեր իրեն : Սիրեցի այս
ծաղիկը , որովհետեւ իր գունատութեամբը
ու իր վախ տեսքովը կը պատկերացնէ
աշխարհ կեանքն այն գունատ ու վախ
աղջիկներուն որոնց է՛ն երիտասարդ հա-
ռակը իսկ կեանքի աշունն է կարծես . որոնք
ասոր պէս անաղարտ պիտի պահեն այն քիչ մը
ազուորութիւնը , զոր լիառատ ունեցողը պիտի
ցանցընէր չորս գին , այն քեզմէ չի բաժնուե-
լու հակումը զոր գրգռիչ ծաղիկներու նմա-
նող աղջիկները ծիծաղելի պիտի գտնէին : Լա-
ւագոյն չէ՞ կաւիւն մը ունենալ , որ քուկդ
ըլլայ միշտ եւ պատրանք չի պատճառէ քեզի ,
քան թէ բնորեւ հոյակապ վարդ մը՝ վառ
կարմիր թերթերով , որոնք խամբին ու թափ-
թփին ապրիլէն մայիս . . . » :

* * *

Իրաւունք ունէ՞ր բարեկամս իր նախամե-
ծարութեանը մէջ :

Ո՞վ կրնայ վճռել :

Թերեւս է՛ն մաքուր ճաշակներէն մէկն էր
իրը՝ սիրոյ մէջ , թերեւս է՛ն արտառօցը :


Սրտի խնդիրներու մէջ՝ ուր քմահաճոյքը

էն մեծ բաժինը ունի՝ կարելի՞ է բացարձակ բան մը ըսել :

Իր խօսքերը մտածել տուին ինծի, սակայն : Ու հիմայ, ամէն անգամ որ, աշնան այս օրերուն, յոյն պզտիկ տղաց ձեռքը կը տեսնեմ փունջ մը կախիւններու, որ անոնց օրապահիկը պիտի հայթայթէ, որոնք չունէին կը սպառեն հատիկ հատիկ վաճառելու համար զանոնք ու չեն յաջողիր, զգայնոտ կարեկցութեամբ մը կը նայիմ այդ դաշկահար ու անհրապօր ծաղիկներուն վրայ : Եւ վայրկենապէս, մտքիս կը ներկայանան, այն դաշկահար ու անհրապօր աղջիկները, ընտելեցնէն զրկուածները, որոնք զիրենք փնտռող մը, սիրող մը չունին, եւ սակայն երջանիկ պիտի ընէին ան որ գգուոտ ու համակիր ակնարկ մը ուղղէր իրենց :

ՄԵՆԱՍԷՐ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



ԺԱՆ ՌԻՇԲԵՆ

Մէտէաի մէջ (Ալճէրիա) ծնած 1849ին, Ռիշբէն հիմայ նորագոյն կամ նոյն իսկ նոր դէմք մը չէ՝ որ պիտի նկատուէր ֆրանսական գրականութեան պատմութեան առջեւ : Եւ այսպէս է արդէն, Փոյթ չէ, կ'ապրի դեռ, ու կը գրէ նոյն իսկ, փոյթ չէ թէ բաղմամբիւ կապկոյններ ունեցած է եւ կ'ունենայ տակաւին : 19րդ դարուն վերջին քառօրդին մէջ ուր արդէն Ռիշբէն իր հաւաքածոններէն մեծ մասին շարքը աւարտելու վրայ էր ու իր համբաւը չահած, ֆրանսական գրականութիւնը նոր հակումներու թատր մը կ'ըլլար, որոնք պիտի կրնան նոյն իսկ իրապաշտութիւնէ տարբեր գրական գեղեցիկ գրութեան մը մղել զայն : Պոտըլէրէն վերջ՝ Վէոլէն մը եկաւ որ մինչեւ մագերուն ծայրը նոր մըն էր, որ ամէնէն անձնական, ամէնէն անկեղծ, ու ամէնէն ալ անձամբ ստրուսուները գրաւ Poèmes Sa-turniensին, ու վերջը մանաւանդ Sagessesին

մէջ, 19րդ դարու այդ մեծ Ալօթագիրքը, այդ մեծ Յայտնարանը : Սթէֆան Մալամի գրական գործունէութիւնը նոյն այդ դարուն վերջին քառօրդին կը պատկանի, Մալամին որուն համար կ'ըսեն թէ անհաւաքարարը՝ ռուսոմ մեռաւ Մօրտաանին պէս, եթէ ոչ Պօտըլէրին նման aphasique . ա'յնքան մեծ ու ա'յնքան զօրաւոր նորութիւն մըն է ան, որ կը վախճամ թէ չգտնէ ալ իր ստանաւորները ու մանաւանդ իր արձակները վերլուծող քննադատ մը : ա'յնքան հերարձակ ու ա'յնքան անձնամոլ անլուր ոճ մը ունի որուն մէջ կը վիտան երկրորդական գաղափարները մինչեւ խեղդելու չափ ընդհանուր գաղափարները :

Ասանկ չհասկցուած, կնճառտ ու կարի անձնական բանաստեղծներու քով, Ռիշբէն մը ո'րքան հեշտ ու ո'րքան ընդունակ է հասկցուելու ու մօտենալու զարգացած ժողովուրդին մտքին : Ահա՛ թէ ինչո՞ւ 19րդ դարու վերջին քառօրդին մէջ երեւցող բանաստեղծներէն մանաւանդ իմ երկու յիշածներս՝ Վէոլէնը ու Մալամին՝ աւելի նոր են քան Mes Blasphèmesի հեղինակը, թէեւ անոնք մեռած ըլլան ու թէեւ այս վերջինը ապրի :

Եթէ այդ նոր բառին մէջ չգնենք յարաբերական իմաստ մը ու Ռիշբէնը առանձին նկատենք, մեր գրական համեստ չըջանակին համար նորէն չղաղրիր նոր մը ըլլալէ :

* * *

Mes Blasphèmesի ու La Chanson des gueuxի հեղինակը իրապաշտ գրագէտ մը կը ճանչցուի ժամանակակից գրականութեան պատմութեան առջեւ : «Արուեստ Արուեստի համար» բանաձեւը կազմուելէն ի վեր իրապաշտութեան համար, գիտութեան հետապնդում մը երեւցաւ ու objectif ի մօլի սէր մը անոր մասին : 18րդ դարու ֆրանսացի արձակագիր իմաստասէրներն են որ արդէն աւելի նպատուիցին դրական խայծ մը ներմուծելու այս դարուն գրականութեան մէջ :

Ռիշբէն, բժիշկի գալակ, իր հօրը գաղափարներովը սնած, իր գիտութեան սէրը ցոյց կուտայ սա տողերուն մէջ .

«Բայց ես, զոր տասն ստինքով գիտու-

թիւնը անոյց իր սեւ կաթով, ե՛ս միայն կը հաւատամ այն ճշմարտութիւններուն զոր այս մայրը կը սորվեցնէ ինծի : »

Ուրեմն պարզ է իր խոհալը : Բոլոր մտքով ծնցուած անկարելիութիւնները հեգնող մըն է ան, եւ կը սիրէ որ անոնք իրենց անջօղ-փելի գեղեցկութեամբ, իրենց բոլոր յանկու-ցիչ ու անստգիւտ երեւոյթներովը անտեսուին մտքին մէջ որքան ալ չե՛ղտ ներկայանան հոն գերազնիւ գերանուրբ տենչերէ մըլուած :

Ինքը կը գոհանայ բոլոր աշխարհային գեղեցիկ բաներով ու զանոնք վայելելու համար շատ հեռուն չերթար, միտքն անգամ խուզարկումի չենթարկեր : Ասանկ դիւրահաճ խոհալ մը պարզ է որ զինքը աւելի ժողովուրդին կապէ, ու Ռիչըէն այսօր է՛ն սիրուած բանաստեղծներէն է Բարիզի ժողովուրդէն, եւ ասիկա տարօրինակ չէ : Ժողովուրդը չսիրեր, բանաստեղծութեան մէջ, կնճառո, դժուարահաճ ու անիրականալի տենչերով լեցուած հոգիները, ինչպէս, ընդհակառակը, նաեւ վէպին ու թատրերգութեան մէջ, չի սիրեր պարզ, սովորական պարագաները : Ու եթէ կ'ուզէք, աւելցնեմ թէ Ռիչըէն աւելի ռամիկ կամ քնատնի ոճին սիրահարն է, բաւեր ունի, որոնք չես գիտեր ո՞ր հեռակայ գիւղերու անկիւններէն կուգան, բոսիկ, հարարձակ ու արեւէն դէմքերնին թխացած այրած նուամանչերու, անօթի, թախծաղէմ ու տժգոյն թափառիկներու, հեղ ձկնորսներու բոլոր իր հետաքոտած բառերը, մզլոտ տխուր բառեր զոր ամէնէն մութ, ամէնէն աննշան կապելաներու անկիւններն անգամ չեն լսած, հեգնութիւններ, սուր պոռչտուն կամ անծանօթ հայհոյանքներ զոր ամէնէն բիրտ ու անընտել գեղացիին ակումներն անգամ չեն ծամնում . . . : Զճմարիտ է սա խօսքը թէ բոլոր իրապաշտ կոչուածները բացառիկ պարագաներ կը միտռեն, եթէ երբեք այդ պարագաներն ալ գոյութիւն ունին :

Բացառիկ type-եր չա՛տ ունի Ռիչըէն, իր թատրերգութիւններէն մեծ մասը արդարեւ ներշնչումի գործեր են :

La Mer-ի մէջ, սակայն, իր ամենէն հանդարտ ու ամենէն ընտանի նկարը գիտեմ որ արդէն ծանօթ է շատերու գեղի պարզ նիւթ

մը զոր Փրանսական հանդէսները ու նոյնիսկ օրագիրները արտասուպեցին ու ցոյց տուին այդ զգայուն պատմութենէն ներշնչուած արուեստագէտի մը (Մ. Մօւսօն) երեւակոյած պատկերը, ճշմարիտ փառք մը իրեն համար որուն կարօտ ալ չէր թէ եւ, Հանի մը որուն զաւակները, թուները, ամուսինը, ծովուն հետ անցուցած են իրենց կեանքը ու անգութ փոթորիկներ հետզհետէ հանձնադրած են զանոնք, ա՛լ միայն թող մը ունի որուն վրայ կը դուրս գորայ : Բայց անոր աչքը միշտ ծովուն է . . . Կ'ուխտէ, երգութեան կուտայ զինքը որ նաւաստի չըլլայ : Կ'անիծէ ծովը, կը թքնէ անոր դէմ : Տղան կ'ահալուելի անոր առջեւ, կը զժկամակի ու մինչ հանին հոգեւորքի մէջ է, տղան կը ճչէ, կ'ուզէ որ ետ առնէ իր երգումը ու ինքն ալ իր հօրը պէս ծովուն փարի նստէ : Ո՛րքան զգայուն ու տխուր է վերջաւորութիւնը : Ամբողջ պատմութեան միամիտ սիրուն երանգը Գօթէինը յիշել կուտայ :

Իսկ իր սիրային ստանաւորները ամէնէն աւելի Les Caresses-ի մէջ պէտք է միտռել : Անոնց մէջ ալ չափազանցուած տողեր ունի, ցայտուն փոխարեութիւններ, աւելի արուեստի գործ քան հոգիի, տառապանքի կամ հաճոյքի վայրկեաններ, — տառապանք մը այնքան ազդու երանգով մը դուրս բերուած : Ճաւազին ու զգածուած է հետեւեալ Սօնէն .

Մարգին մէջ ուր, հեծկլաալով խեղի պէս,
Գլորեցայ, տարի ցաւըս անիծուած .
Պիղծ արցունքներս հողին տային խայթեր կեզ,
Սև ծակերով խոտերուն մէջ ծաղկամած :

Պուրակներուն, ցանկերուն մէջ տարի զայն,
Ջուարք խայտիտն ու սոխակը լրսիլու,
Բայց թռչէին անոնք մեղմէ շատ հեռու,
Խամրած դէմքիս, ո՛հ, կըմալքեն, վախով լայն :

Ցաւս այն ատեն տարի մինջեւ ես ծովափ,
Ուր արցունքներս դառն փոսին մէջ մոռցուին,
Ուր ժայռն, ալիք, վկայ են հոն առանձին :

Բայց կը թողուր ժայռն համրութեան մէջ՝ սարսափ,
Սարսափալով՝ ալիքն ինձմէ կը խուսէր . . .

Ո՛րքան արուեստոտ բանաստեղծութիւն՝ ցոյց տալու համար ցաւին ու յետոյ վախին սաստկութիւնը :

Մեզմ տողերը ալ ունի որ կարծես վէ-
լէնի մը գրչէն ելած են , ու ապրուած :

Մըքամած սառն օդին
Տերեւները վերջին
Անուանետին մէջ քաւակին
Երջանկութեանըս պէս :

Ասանկ տխուր ու ցրտաշունչ տողերէ վերջ
Ռիչքէն նորէն ի՛նչ զուարթ չարածճի բաներ
ունի որ կատարեալ mondain մը կը ներկայա-
ցընեն զինքը . այդ զուարթ տողերուն մէջ
ամէնէն աւելի իրապաշտ մըն է ինքը , որով-
հետեւ տխուր բաները չափազանցուցած է
ան , մինչդեռ զուարթները կամ թեթեւ
աղետը սիրունութիւնները իր զգացածին պէս
կ'արտայայտուին միշտ :

Ե. Գ.

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ուսուցիչներու կեանքի ապահովագրու-
թեան խնդիրը ուսումնասիրող մասնախումբը
աւարտած է իր աշխատութիւնը եւ արդիւնքը
նկատողութեան պիտի առնուի՝ Ս Պատրիարք
Հօր նախագահութեամբ գումարելի Ուսումն.
Խորհրդոյ նիստի մը մէջ : Մասնախումբը հա-
մաձայնած է Խնձիթն ապահովագրական բն-
կերութեան հետ որուն Տնօրէնը՝ Սիմօն Էֆ.
Գայէրլեան է՛ն նպաստաւոր պայմանները
առաջարկած է : Գայէրլեան էֆէնային այս
առաջին անգամը չէ որ գործնական կերպով
կ'ապացուցանէ իր գնահատելի զգացումները
հանրօգուտ ձեռնարկութեանց նկատմամբ ,
զորս գիտէ նպաստաւորել՝ իր վարած ապա-
հովագրական ընդարձակ գործառնութեան
ընծայած առաւելութիւններուն շնորհիւ Մոս-
ցուած չէ անշուշտ Հիւանդանոցի «ստանին
գանձանակը» զոր քանի մը տարի առաջ ինք-
նաբերարար գետեղեց իր գրասենեակին մէջ
եւ որուն արդիւնքը յատկացուց չէնքի մը
գնման՝ ի նպաստ Հիւանդանոցին , մինչդեռ
ուրիշ շատերու արձեւերուն կամ գրասենեակ-
ներուն մէջ ընդունուած «առանին գանձա-
նակները» մէկ կողմ նետուած՝ հազիւ 10-20
դր. կ'արտադրէին :

Տասեան Յարութիւն փաշայի կենսագրու-
թիւնը ընելու առթիւ , Ծաղիկ օրաթերթը սա-
լահեկան մանրամասնութիւնը կը հաղորդէ .
— «Յարութիւն փաշա՝ Բարիզէ դարձին՝ Սուլ-
թան Ապտ-իւլ-Մէճիտի հրամանաւ՝ բնական
գիտութեանց ուսուցիչ կարգուած է Պոլսոյ
գինուորական վարժարանին : Ինչպէս յայտնի
է , Յարութիւն փաշա շատ աշխատած էր գի-
տութիւններու , ինչ որ արդէն մասնաւոր
յատկանիշն է Տասեան գերդաստանին : Առա-
քէլ ամիրա Տատ՝ նախահայրը այդ գերդաս-
տանին : Նշանաւոր մէքենագէտ մին էր , եւ
վառօղի , չուխայի ու թնդանօթի շինութեանց
համար լազմաթիւ մեքենաներ պատրաստած
էր Պօլսոյ մէջ , Սուլթան Սէլիմ Գ.ի հրամա-
նաւ : « Արեւելքի Վօզանսօն»ը կոչած են
զինքը , իր մեքենագէտի ճարտարութեանը
համար : Վօքանսօն ֆրանսոցի նշանաւոր մե-
քենագէտ մըն է , ժամանակակից Առաքէլ
Տատ ամիրային : »

Ասանայէն հասած լուրերու նայելով , ինչ-
պէս կը կարգանք Արեւելքի մէջ , Կիլիկիոյ
Կաթողիկոսական ընտրութեան համար գու-
մարելի Ընտրողական Ժողովին առաջին նիստը
հօկու. 20 ին յետաձգուեալ է , Ժողովին ան-
դամներէն ոմանց յապաղելուն պատճառաւ :

Ագրիանուպոլսէն հօկու. 7 թուականով
Արեւելքի ուղղուած նամակէ մը ցաւով կ'իմա-
նանք մահը Տօքթ. Զենոր էֆ. Մուրատեանի
որուն քեռայրն էր Պատրիարքարանի դիւա-
նադպիր՝ ողբացեալ Ալիքան Արիփարեան ,
որուն այրին՝ հազիւ չորս ամսեան միջոցի մը
մէջ՝ յաջորդարար իր ամուսինը ու եղբայրը
կորսնցնելու կրկնակ դժբաղդութիւնը կ'ունե-
նայ . — «Այսօր թաղեցինք , կը գրէ Արեւելքի
թղթակիցը , յուշարկաւորներու խումբն լազ-
մաթիւնով մը , Տօքթ. Զենոր էֆ Մուրատե-
անը , որ կարճատեւ հիւանդութենէ մը
ետքը կը մեռնէր , Էտիրնէի բժշկական մար-
մինը իր կարող անդամներէն մէկը կորսնցուց ,
աղքատները իրենց բժիշկը , իրենց կ'ըսեմ ,
որովհետեւ անոնցն էր բոլորովին , եւ կը
դարձանէր առանց պահանջելու , եւ Արշա-
կունեաց ու Հոփիսիմեանց վարժարանի հո-
գարարութիւնը իր ամենէն գործունէաց ան-
գամը : Կրնամ ըսել որ Էտիրնէի էն ժողովըր-

դական բժիշկն էր, եւ ասիկա բան մըն է, խորհելով որ արդէն ինք՝ իբր զինուորական բժիշկ՝ իր զբաղումը ունէր, Հիւանդանոցը, եւ ասով հանդերձ, իբր կարող բժիշկ, համբաւ ունենալով, ունէր շատ մը յաճախորդներ: Դիւրահաղորդ բնավորութեամբ, ազնիւ, համակրելի, սիրելի եղած էր ամէնուն, եւ այսօր երբ ամէնքն ալ կ'ողբան իրենց բարեկամը կամ պաշտօնակիցը, կարելի չէ խորհիլ որ, իբր ընտանիքի հայր, շատ դառն է եղած կորուստը: Կը թողու այրի մը ու հինգ որբեր որոնց չորսը անչափահաս: Պաշտօնին բերու մովը, բաւական առնէ ի վեր հոս հաստատուած էր, ու ա'լ տեղացի կը սեպուէր: Վերջերս էր որ սկսաւ զրազիւ կրթական խնդիրովը, ու շատ փայլուն սկսաւ: Վկայականներու բաշխումին օրն էր որ, հանդէսին աւարտելէն ետքը, խոստացած էր գրասեղաններու շինութեան ձեռնարկել, որոնց պէտքը այնքան անհրաժեշտ էր: Ու այսօր, երբ ալ եղած լինցած է գրասեղաններու շինութիւնը, կը խորհիմ որ Էտիրնէցի գպրոցականները եւ թերեւս սերունդ մըն ալ, երախտագիտութեան մեծ բաժին մը կը պարտին այդ բարի մարդուն, որ ջանք չի խնայեց ու կրցաւ ի գլուխ հանել Նոր ձեռնարկած էր պաշտօնին, բայց այն գուրպուրանքը, որով կը վերաբերուէր դպրոցին հանգէպ, շատ տւելին յուսալ կուտար: Աղւուր օգով մը, եւ յուզարկաւորներու ահագին բազմութիւնով մը, որուն մէջ մեծ տեղ կը բռնէին թուրք եւ օտարազգի ծանօթներ ու արուեստակիցներ, հոգին յանձնեցինք հանգուցեալը: »

Օրհնութեան Կոնդակ. — Երուսաղէմի Ս. Պատրիարք Հայրը օրհնութեան երկու Կոնդակ զրկած է Պատրիարքարանի երկու յարգելի Դիւանապետներուն՝ Բարթող էֆ. Թէլեանի եւ Կորապետ էֆ. Խաչատուրեանի, իբրեւ բարոյական գնահատման հաւատարմը մը անոնց խղճամիտ պաշտօնավարութեան որուն անձամբ ալ ականատես եղած էր, ատենոք, ալեզարդ Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը այս տեղ, Պատրիարքարանի մէջ:

ՄԱՆՁԵՐՈՒ ԹՇՆԱՄԻՆ

Գրեց ՏՌԲԹ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ամէն դատարարակի եւ ծնողքի խորհրդատու հատոր մը՝ ընդդէմ պատանեկան մուլութեան:

Գին 5 դանեկան

1—5

ՏՌԲԹ. ԳՐԻԳՈՐ ՃԵԼԱԼ, ցախկին *Եփդեմ* եւ *Ենդեմ* Բարիզի հիւանդանոցներուն, եւ ժաղրաբան պատուած Assistance Publique-ի կողմէ: 14 տարի Բարիզ անցունելէ ետք, որուն 6 տարին իբրեւ բժիշկ, մայրաքաղաք հաստատուած է: ՏՌԲԹ. Գ. ՃԵԼԱԼ կը դարմանէ, բացի ընդհանուր հիւանդութիւններէ, մասնաւորապէս *ջղային* եւ *մորթային* հիւանդութիւններ: Ամէն օր, չորեքշաբթիէ զաւ, կես օրէ վերջ հիւանդ կընդունի իր տունը՝ Բերա, Սագրզ Աղան, ք. 39: Երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաքաղաքներ՝ Սամաքիա, Քրիսեան դեղաւանքին կից տունը: 5—30

ԶՐՈՒՅԱՏՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Անգլիերէն լեզուի (1901)

Ի պէս վարժարանաց եւ իմֆընսի ուսանողաց

Հայերէնի վերածեց ԳԵՈՐԳ Յ. ԿԻՆԼԵԱՆ

Սոյն Քերականութեան մէջ հարթուած են անգլիերէն լեզուի բոլոր դժուարութիւնները: Ամէն անոնք որ կը փափազին ՍՈՒՂ Ժամանակի մեջ սորվիլ եւ ՈՒՂԻՂ սորվիլ անգլիերէն լեզուն, թո՛ղ անգամ մը փորձեն սոյն դասագիրքը:

Դիմել Յ. Արապեան Գրատուն,

ՄԱՐԶՈՒԱՆ

եւ կամ հրատարակչին՝ Herrn Julius Gross, Verlagsbuchhändler, HEIDELBERG. (Allemagne)

եւ կամ Պ. Պալենց Գրատունը

Չագմազճըլար, Թիւ 20,


4—8

Կ. ՊՈԼԻՍ

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԷՆՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆինանսըլար եօղուղու, Թիւ 27



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր Ի

Ձեռքի, ոսկի եւ ձեռքի ու ոսկի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործութեամբ, հաստատունը եւ զիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ԲԵՐԱ, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ { 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամպէյին կայարանին Դիմաց.

ՊՈԼԻՍ { 1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՍԻՆԿԵՐԻ
ՄԱՍԻՆԿԵՐԻ
ՄԱՍԻՆԿԵՐԻ
ՄԱՍԻՆԿԵՐԻ



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊՍԶՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ.

34,775,642 Փրանք

Երաշխաւորութեան գումար

121,765,333

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ քաղաքին վրայ, Մախաւան հին տեղը

Ընդհ. Գնեհի
Ա. ՀԻՒՐՄԻՔՅ

Ընդհ. Գործակալ
ԲԷՆՅՈՐ ՌԷՐԷՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884ԻՆ

ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ

Թիւ 85 — Կալաքա, Վոյվոսա փողոց — Թիւ 85

Խիստ խնամով ու տարապայման աժան գիներով չափու վրայ կը պատրաստուին աժէն տեսակ շապիկ, օձիք, թեւնոց, գիշերազգեստ ու ներքին ճերմակեղէններ :

Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպամաներու զանազանութեամբ օժտուած սոյն գործարանը տրամադիր է ընդունիլ ու կատարեալ հոգածութեամբ պատրաստել հարսանեաց ճերմակեղէններու յանձնարարութիւններ :

Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիներով օձիք, թեւնոց, ֆլանէլ, գուլպայ, թաշկինակ, ոսկեզօծ կոճակներ, փողկապ, դրամապնակ, զմեյի «Չէֆրլա», խոզանակ, սանար ու անուշահոտութեանց լաւադոյն տեսակներ :

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան, ապրանայ ազնուութեան, յանձնարարութեանց խնամով պատրաստութեան, ու գիներու աժանութեան տեսակէտով վստահելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տուններէն մէկն է :

ԳԻՆԵՐԸ ՈՐՈՇԵԱԼ ԵՆ

ԱՐԻՍ ԵՒ ԸՆԿ

ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՐԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



Վաճառանիշ



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանաւորը հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ :

Տեսակի աղնութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանայ գէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գիներու գերազանց աժանութիւնը : Փափաքողներուն՝ քաթալօիդ ճրի կը զրկուի :

Մեծաքանակ գնում ընել ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՈՍՏԻ ՊԱՔԵԻ Կ. ԻՆՃԻԴԻԵԱՆ ՈՐԴԻԲ վաճառատունները, իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով :

ԲԱՐԻՋ.—ՊՊ. Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շաբուեօն :

ՊՈՄՊԱՆ.—ՊՊ. Ապքար եւ Ընկ. :

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ.—Պ. Մ. Գալֆանան

ԳԱՀԻԲԷ.—Պ. Հ. Ռոզանթալ :

ՌՈՒՍՃՈՒԳ.—Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք :

ՎԱՌՆԱ.—Պ. Կեռն Արտիքի :

ԻՋՄԻՏ.—Պ. Յակոբ Մոմճեան

ՋՄԻԻՌՆԻԱ.—Պ. Հայնրիխ Վառնիկ :

ՍԵԼԱՆԻԿ.—Պ. Տինօ Ֆերնանտէզ :

ԻԻՍԿԻԿ.—Պ. Մ. Բափուանօ :

ՊԵՅՐՈՒԹ.—Պ. Ֆրանքել Շիֆֆեր :

ՍԱՄՍՈՆ.—Պ. Պ. Պետրոսեան եղբարք :

ՏՐԱՊԻՋՈՆ.—Պ. Արիս Կ. Ինճիճեան :

ՍԵԲԱՍՏԻԱ.—Պ. Պ. Վ. Ս. Մեծատուրեան

ՌՈՏՈՍԹ.—Պ. Յակոբ Բոօպատալ